Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-905-29.08.2024,17.10.2024-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 69-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«69) **Հայաստանի Հանրապետության արագ արձագանքման բժշկական խումբ՝** արտակարգ իրավիճակներում գործող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինքնաբավ և հատուկ պատրաստություն անցած մասնագիտական խումբ.»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում՝

ա. «Հիվանդանոցային» բառից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը, իսկ «հնարավորությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բժշկական օգնության եւ սպասարկման որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջներ» բառերը.

բ. առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում լիազոր մարմնի կողմից սահմանված տեսակների բժշկական օգնության և սպասարկման

իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների, սահմանում է լիազոր մարմինը:».

2) 6-րդ մասում «ինչպես նաև հիվանդանոցային» բառերից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը:

Հոդված 3. Օրենքի 35.1-ին հոդվածի՝

1) 3-րդ և 4-րդ մասերում «լիցենզավորող հանձնաժողովի» բառերը փոխարինել քննական հանձնաժողովի» բառերով.

2) 4-րդ մասից «լիազոր մարմնի ձևավորած» բառերը հանել:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր՝ 42.3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 42.3. Արագ արձագանքման բժշկական խումբ

Արտակարգ իրավիճակների հետեւանքով տուժածներին բժշկական օգնություն ևսպասարկում տրամադրելու աշխատանքներին կարող են ներգրավվել նաեւ Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խումբը և մարդասիրական առաքելության շրջանակում Հայաստանի Հանրապետություն ժամանած միջազգային արագ արձագանքման բժշկական խմբերը:

Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խումբը կարող է ներգրավվել նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին՝ տուժածներին բժշկական օգնություն եւ սպասարկում տրամադրելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում Արագ արձագանքման բժշկական խումբ ստեղծելու, դրա կառուցվածքը, կազմը, թվաքանակը, գործունեության համար անհրաժեշտ միջոցների ցանկը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվելու կարգը սահմանում է կառավարությունը:

տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվում

է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների ժամանակ տուժածներին բժշկական օգնություն եւ սպասարկում տրամադրելու աշխատանքներին ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի եւ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարների համատեղ հրամանով սահմանված կարգով:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

~~Առաջին~~Երկրորդ ընթերցում

Կ-905-29.08.2024,17.10.2024-ԱոՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~3~~ 2 –րդ հոդվածի ~~5~~ 1-ին մասը լրացնել նոր՝ 69-րդ ~~մասում՝~~ կետով ՝ հետևյալ բովանդակությամբ.

«69) **Հայաստանի Հանրապետության արագ արձագանքման բժշկական խումբ՝** արտակարգ իրավիճակներում գործող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինքնաբավ և հատուկ պատրաստություն անցած մասնագիտական խումբ.»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի՝

5-րդ մասում՝

ա. «Հիվանդանոցային» բառից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը, իսկ «հնարավորությունները» բառից հետո լրացնել «, ինչպես ~~նաեւ~~նաև բժշկական օգնության եւ սպասարկման որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջներ» բառերը~~:~~.

բ. առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ՝

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում լիազոր մարմնի կողմից

սահմանված տեսակների բժշկական օգնության ~~եւ~~և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները~~՝~~՝ ըստ ~~տեսակների եւ~~ մակարդակների, սահմանում է լիազոր մարմինը~~։»։~~:».

2) 6-րդ մասում «ինչպես նաև հիվանդանոցային» բառերից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը:

Հոդված ~~2.~~ 3. Օրենքի 35.1-ին հոդվածի՝

1) 3-րդ ~~եւ~~և 4-րդ մասերում «լիցենզավորող հանձնաժողովի» բառերը փոխարինել «քննական հանձնաժողովի» բառերով~~։~~.

2) 4-րդ մասից «լիազոր մարմնի ձևավորած» բառերը հանել:»:

Հոդված ~~3~~4. Օրենքը ~~42.2-րդ հոդվածից հետո~~ լրացնել նոր՝ 42.3-րդ հոդվածով՝ ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ.

Հոդված 42.3. Արագ արձագանքման բժշկական խումբ

Արտակարգ իրավիճակների հետեւանքով տուժածներին բժշկական օգնություն ~~եւ սպասարկում~~և սպասարկում տրամադրելու աշխատանքներին կարող են ներգրավվել նաեւ Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խումբը ~~եւ~~և մարդասիրական առաքելության շրջանակում Հայաստանի Հանրապետությունը

~~Հ~~Հայաստանի Հանրապետության Արագ արձագանքման բժշկական խումբը կարող է մերգրավվել նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին՝ տուժածներին բժշկական օգնություն եւ նպասարկում տրամադրելու նպատակով:

~~Հ~~Հայաստանի Հանրապետությունում Արագ արձագանքման բժշկական խումբ ~~ձ~~ստեղծելու, դրա կառուցվածքը, կազմը, թվաքանակը, գործունեության համար մանհրաժեշտ միջոցների ցանկը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ~~թ~~տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվելու ~~կ~~կարգը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարությունը:

~~Ա~~Արագ արձագանքման բժշկական խումբը Հայաստանի Հանրապետության

~~գ~~

~~գ~~

~~ա~~

տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ներգրավվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների ժամանակ տուժածներին բժշկական օգնություն եւ սպասարկում տրամադրելու աշխատանքներին ներգրավվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի եւ ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարների համատեղ հրամանով սահմանված կարգով:

Հոդված 45. Եզրափակիչ մաս ~~եւ~~և անցումային դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են ~~մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 1-ը:~~ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

(Կ-905-29.08.2024,17.10.2024-ԱռՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***Կառավարություն***	1-ին հոդված	Առաջարկում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 69-րդ կետով, տալով «Հայաստանի Հանրապետության արագ արձագանքման բժշկական խումբ» հասկացության սահմանումը: Նախագծի առաջին հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996	Ընդունվել է	Ընդունվել է

			թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 69-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «69) Հայաստանի Հանրապետության արագ արձագանքման բժշկական խումբ՝ արտակարգ իրավիճակներում գործող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինքնաբավ և հատուկ պատրաստություն անցած մասնագիտական խումբ»: Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:		
2.	***Կառավարություն***	1-ին (խմբագրված 2-րդ) հոդված	1. «5-րդ մասում՝» բառերից առաջ համարակալել որպես 1-ին կետ՝ նշելով «1)» թիվը, **2.** առաջին նախադասությունը համարակալել որպես «ա.» ենթակետ, միևնույն ժամանակ «հնարավորությունները» բառից առաջ առաջարկում ենք լրացնել ««Հիվանդանոցային» բառից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը, իսկ» բառերը, Հաշվի առնելով վերոգրյալը առաջին նախադասությունը լրամշակվել է հետևյալ բովանդակությամբ՝ «ա. «Հիվանդանոցային» բառից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը, իսկ «հնարավորությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բժշկական օգնության եւ սպասարկման որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջներ» բառերը.»	Ընդունվել է	Ընդունվել է

			Քանի որ, ինչպես Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասով արդեն իսկ սահմանված է, որ **հիվանդանոցային** բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են ըստ մակարդակների, սույն փոփոխությամբ նախատեսվում է մակարդակավորման պահանջ սահմանել նաև **արտահիվանդանոցային** պայմաններում բժշկական օգնություն և սպասարկման իրականացման համար: Նշված փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բժշկական օգնության և սպասարկման մի շարք տեսակներով *(օրինակ՝ լաբորատոր-ախտորոշիչ, մանկական-վերականգնողական*) բժշկական օգնություն և սպասարկում իրականացվում է ոչ միայն հիվանդանոցային, այլ նաև արտահիվանդանոցային պայմաններում և այդ որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված Լիազոր մարմնի կողմից պետք է հաստատվեն դրանց իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների: Վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք գործող օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել լրացում՝ նախագծի 2-րդ հոդվածը լրացնելով նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2) 6-րդ մասում «ինչպես նաև հիվանդանոցային» բառերից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը:»		

			3. «2)» կետը համարակալել որպես «բ.» ենթակետ, «2)»-րդ կետի՝ խմբագրված որպես «բ.» ենթակետի երկրորդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում լիազոր մարմնի կողմից սահմանված տեսակների բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների, սահմանում է լիազոր մարմինը:».» Քանի որ, Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, թե ինչ են արտահայտում «մակարդակները»: Սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության մեջ լրացման արդյունքով Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասում կսահմանվի, որ հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում են ըստ մակարդակների, որոնք արտահայտում են բժշկական կազմակերպության *կադրային, տեխնիկական* և *կառուցվածքային հնարավորությունները«, ինչպես նաեւ բժշկական օգնության եւ սպասարկման որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջներ* ՝ տվյալ տեսակի բժշկական օգնությունն ու սպասարկումը ընթացակարգով սահմանված ողջ ծավալով իրականացնելու համար:		

			Այս առումով հարկ է անդրադառնալ Օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, որոնց համաձայն՝ ... հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ***մակարդակների սահմանման և տրամադրման կարգը*** սահմանում է լիազոր մարմինը՝ Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 93-Ն հրամանով: Սույն հրամանով կարգավորվում են մակարդակների սահմանման (մակարդակավորման) հետ կապված հարաբերությունները, և 23-րդ կետով սահմանված է, որ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մակարդակները սահմանվում են (մակարդակավորումը կատարվում է) ըստ բժշկական օգնության և սպասարկման տեսակների՝ հիմք ընդունելով ***Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման հավելված 13-ով հաստատված հիվանդանոցային*** (մասնա-գիտացված) բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական՝ սարքավորումների և բժշկական գործիքների ու մասնագիտական որակավորման՝ կադրային հագեցվածության պահանջները ու պայմանները: Հրամանի նույն կետով բացառություն է նախատեսված որոշ տեսակների համար, որոնց նեղ մասնագիտական առանձնահատկություններից և տվյալ տեսակների բժշկական օգնությունն ու սպասարկումը ողջ ծավալով իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ այդ տեսակների համար մակարդակները սահմանվում են՝ հիմք		

			ընդունելով ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջները (հրամանի 23.1-ին կետ, որտեղ և հստակեցված են այդ որոշ տեսակները): Հետևաբար, Առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 93-Ն հրամանի դրույթներից հետևում է, որ հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման մակարդակները որոշ տեսակների համար արտահայտում **են Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման** հավելված 13-ով հաստատված հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ ***տեխնիկական ու մասնագիտական որակավորման պահանջները*** ու պայմանները, իսկ որոշ տեսակների մակարդակները՝ **լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջները:**		
3	***Կառավարություն***	2-րդ (խմբագրված 3-րդ) հոդված	Առաջարկում ենք գործող օրենքի 35.1-ին հոդվածի 4-րդ մասից հանել **«լիազոր մարմնի ձևավորած»** բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը համաձայն որի՝ Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները: Հաշվի առնելով վերոգրյալը նախագծի 2-րդ (նոր խմբագրված 3-րդ) շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«***Հոդված 3.*** Օրենքի 35.1-ին հոդվածի՝ 1) 3-րդ և 4-րդ մասերում «լիցենզավորող հանձնաժողովի» բառերը փոխարինել «քննական հանձնաժողովի» բառերով, 2) 4-րդ մասից «լիազոր մարմնի ձևավորած» բառերը հանել:»:		
4.	***Կառավարություն***	3-րդ (խմբագրված 4-րդ) հոդված	1. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածում (նոր խմբագրությամբ 4-րդ) հոդվածում **«42.2-րդ հոդվածից հետո»** բառերը հանել՝ իրավաբանական տեխնիկայի ճիշտ կիրառման անհրաժեշտությունից ելնելով: 2. 3-րդ (խմբագրված 4-րդ) հոդվածով լրացվող նոր 42.3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է
5.	***Կառավարություն***	4-րդ հոդվածի (խմբագրված 5-րդ) հոդված	1. Նախագծի 4-րդ հոդվածի (նոր խմբագրությամբ 5-րդ հոդվածի) 2-րդ մասում նշված «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին	Ընդունվել է	Ընդունվել է

			մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը: 2. Առաջարկվում է օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունելու ժամկետը վերնայել, քանի որ մինչև ս.թ. դեկտեմբերի 1-ը նշված ակտերի ընդունումը իրատեսական չէ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նախագծի 4-րդ հոդվածի (նոր խմբագրությամբ 5-րդ) հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»:		